ԼՈՒՐԵՐ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻՑ

ԻՋԵՎԱՆՈՒՄ ՕԾՎԵՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՄԲԵԹԻ ԽԱՉԸ

Հուլիսի 5-ին Իջևանում մեծ հանդիսությամբ օծվեց Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթի խաչը: Օծման սրբազան արարողությունը կատարվեց հանդիսապետությամբ և ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի: Սրբազան արարողությանը մասնակցում էին Գուգարաց թեմի փոխառաջնորդ Տ. Սասուն ծայրագույն վարդապետ Զմրուխտյանը և հոգևոր հայրեր, ներկա էին մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներն ու համայնքի բնակչությունը:

Համաձայն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և մեր հոգեշնորհ վարդապետների կանոնակարգած արարողության՝ ըստ պատշաճի նախ խաչը լվացվեց ջրով և գինով և ապա ձեռամբ թեմակալ առաջնորդի օծվեց Սուրբ Մյուռոնով:

Առաջնորդական փոխանորդ Տ. Սասուն ծայրագույն վարդապետի բարիգալստյան և օրվա խորհրդին նվիրված սրտառուչ խոսքից հետո Սեպուհ Սրբազանն իր քարոզում շեշտեց. «Այս հիասքանչ եկեղեցու խաչը սրբագործվեց՝ վերածելով այն հաղթության զենքի և ամրության վահանի ի մխիթարություն և օրհնություն Տավուշ աշխարհի մեր հավատացյալների»: Սրբազան Հայրն իր խոսքում ներկաներին հավուր պատշաճի և հանգամանալից մեկնաբանեց, թե ինչպես խաչը՝ մեր Տիրոջ խաչելությամբ, մահվան գործիքից վերածվեց փրկության միջոցի և մեզ՝ հայերիս համար դարձավ պաշտամունքի առարկա: Սեպուհ Սրբազանը այնուհետև հորդորեց հատկապես երիտասարդությանը, որ քրիստոնեական կյանքով ապրեն և հավատարիմ մնան մեր ազգային արժեքներին ու ինքնությանը:

ՕԾՎԵՑ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԱՔՈՐԻ ԳՅՈՒՂԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՄԲԵԹԻ ԽԱՉԸ

Հուլիսի 12-ին Աքորի գյուղում մեծ հանդիսությամբ օծվեց Ս. Գևորգ (XIII դ.) եկեղեցու գմբեթի խաչը: Օծման սրբազան արարողությունը կատարվեց հանդիսապետությամբ և ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի և Ալավերդու տարածաշրջանի հոգևոր հայրերի մասնակցությամբ: Սրբազան արարողությանը ներկա էին Ս. Գևորգ եկեղեցու բարերար ԱԺ պատգամավոր Կարեն Սարիբեկյանը, Ալավերդի քաղաքի ու համայնքային իշխանությունների ներկայացուցիչներն ու գյուղի ազգաբնակչությունը:

Համաձայն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և մեր հոգեշնորհ վարդապետների կանոնակարգած արարողության՝ ըստ պատշաճի նախ խաչը լվացվեց ջրով և գինով և ապա Սրբազան առաջնորդի ձեռքով օծվեց Սուրբ Մյուռոնով: